## ՀԱՎԵԼՎԱԾ

### ԹԱՔՐԻՐՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՑԱՔՍԻՄԻԼԵՆԵՐ

(էջ 190) (համար 24)

(Հայոց պատրիարքի Բարձրագույն Դռանը ներկայացրած գրության պատճենը)

Դեպի Միջերկրական ծով աքսորված խառնակիչ վարդապետները այսուհետև ևս չվերադառնան, իսկ այն մի քանիսը, որ կայսերական հրովարտակով պիտի գնային իրենց աքսորավայրերը, բայց մինչև այժմ բնակվում են Ատալիա (Անթալիա) կոչված վայրում, այդպիսիններին իրենց աքսորավայրը արտաքսելը հնարավոր չլինելու դեպքում, անկարացի լինելու պատճառով թույլ տալ, որ գնան իրենց բուն ծննդավայրը և երբեք չմեկնեն ուրիշ վայրեր։

Քանի որ բոլոր անկարացի խռովարարներն իրենց նախկական ծննդավայրից ցրվելով, իրենց էության մեջ արմատացած խառնակչությունը կատարում են նաև ուրիշ վայրերում, սրանից առաջ արձակված ինքնագիր հրամանագրով նրանք իրենց կանանց և զավակների հետ միասին, մի անգամ ևս չտեղափոխվելու պայմանով ուղարկվել են իրենց ծննդավայրը, ըստ որում նրանք հանդիսանում են ոչ թե աքսորվածներ, այլ ապրում են միայն իրենց բնակավայրում. չտեղափոխվելու դեպքում էլ նրանք դարձյալ չպիտի դադարեն խառնակչությունից. իսկ եթե, ըստ պահանջի, անհրաժեշտ լինի մի քանիսին ներել և ազատ արձակել, նրանց մեջ չարությամբ համակված մարդկանց մասին ձեզ պիտի հայտնվի ծառայականիս մյուս ցուցակով։ Սրանցից բացի բարձրագույն հրամանով տարբեր վայրեր աքսորվածներից ոմանց ներում և ազատություն շնորհվելու դեպքում Ստամբուլ գալու ժամանակ կայսերական հրամանով բնակվելու են ոչ թե Ղալաթայում, Բերայում և այլ արգելված վայրերում, այլ բարձրագույն հրամանով արտոնություն տրված և հայ հպատակների բնակած թաղերում, պայմանով, որ առաջվա նման իրենց պատրիարքին հնազանդելու գործում չընդդիմանան։

Բանավոր տրված հրամանի հիման վրա, երբ, առանց հավանության, միտքս է գալիս, որ ակներև է սրանց նենգությունն ու ապիրատությունը, բայց, ըստ հարկի, եթե հրամայվի և թույլատրվի նրանցից ոմանց վերադարձը, սակայն, որպեսզի նրանք չկարողանան գործադրել իրենց չարությունը, գայթակղությունն ու անպատկառությունը, նրանք չպետք է ելու-

մոտ ունենան արքունական պալատ, պետական բարձրաստիճան ղեկավարների պաշտոնատեղինները, չպետք է նրանց թույլատրել խառնվելու պետական տուրևառին, դավառներում չգտնվեն մեծ վեզիրների, հարգարժան միրմիրանների, կառավարիչների, ավագանու, վոյեվոդների, մոլլաների, դատավորների մոտ և չմտնեն ծառայության մեջ. և եթե այս ձևը հարմար է ձեր կամեցողությանը և կարգադրվի կայսերական հրամանով, ապա նրանք նզովյալների նման հաջողության չեն հասնի։ Նրանք չպիտի կարողանան գործադրել նաև իրենց նենգությունը, և կարելի է հուսալ, որ օրեցօր կործանվելու են. այս հարցը այսուհետև որպես կանոն ընդունելու համար հարկ եղած տեղերը ծանուցագրեր ուղարկելը կախված է ձեր կամքից։

(Համար 16)

(Հայոց պատրիարքի ճիշատակագիրը)

Ծառայականիս հուշագիրն այն է որ՝

Նվաստիս հասած մեծապանծ հրովարտակի բարձրարժեք հրամանի համաձայն ստուգվելով, որ որոշ ժամանակից ի վեր Անկարայից և այլ վայրերից եկող և Ստամբուլում բնակություն հաստատած խառնակիչները հանդգնում են կատարել հպատակության պայմաններին հակասող գործեր և համարձակվում են ընդունել այնպիսի բացասական վարքագիծ, որը գայթակղություն է, պատճառում հայ ազգին, երկրի ու ազգի կարգն ու կանոնը խանգարումից պահպանելու և այսուհետև առանց Ստամբուլում ոտք դնելու, իրենց քաղաքներում առևտրով, երկրագործությամբ և հողամշակությամբ զբաղվելու վերաբերյալ տրված կայսերական հրամանի համաձայն նրանք վտարվել են Ստամբուլից։ Թեև այդ խմբի հետ միասին արտաքսվել են նաև հատկապես իրենց համար վարդապետ ընտրած խռովարար անձինք, բայց հիշյալ վարդապետները, իրենց տևական սովորության և չարակամ տարբերքում կուտակված մոլության պատճառով իրենց գնացած տեղերում էլ հանդիստ չմնալով ակներև է, որ ձգտելու են մոլորության մեջ գցել մի խումբ պարզամիտ, չարն ու բարին չճանաչող խոնարհ դասի հայերին և հպատակության կանոնին հակասող բացասական ընթացքի դրդել ու մղել, այդպիսով բացահայտորեն պատճառ են դառնալու ազգի ու երկրի կազմալուծման։ Բացի դրանից ստույգ է, որ Ստամբուլում գտնվող և նման անպատշաճ գործերով զբաղվող քաղաքացի խառնակիչների և հատկապես իրենց վարդապետների մինչև հիմա հայտնի դարձած և հաստատված անզգամության և չարագործությունների առթած պահանջից է, որ բացահայտ դարձավ այդ տհաճ գրգռիչներին կանխելու օգտակարությունը, ուստի անհրաժեշտ է պահպանել երկրի և ժողովրդի կարգն ու կանոնը խառնակություններից և քչփորիկներից։ Արտաքսված այդպիսի վարդապետները Ստամբուլում, թե՛ այսուհետև Օսմանյան երկրի որ կողմում էլ գտնվելու լինեն, հարկավոր է իրենց գտնված վայրի ոստիկանության, ինչպես նաև պատրիարքի կողմից նշանակված և բարձրադույն հրամանով պաշտոնի կոչված հոգևոր առաջնորդի միջոցով որոնել հիշյալ խառնակիչների վարդապետներին և պարզել նրանց վիճակն

ու հանգամանքները, իրենց ձեռքում պատրիարքի կողմից կնքված վկա-
յագիր ունեցողներին ստուգելուց հետո, այդպիսի վկայագիր չունեցողներին
նույն վայրի ոստիկանապետի և առաջնորդի միջոցով սաստելով
ուղարկել և հանձնել այդ կողմի հարևան ծովեզերքի նահանգապետին, որը
առանց Օսմանյան երկրի նավամատույցները դուրս բերելու, ուղղակի
վտարելու է Օսմանյան երկրից և նրանց արտաքսումը հաստատող օրի-
նական տեղեկագիրը ներկայացնելու է Բարձրագույն Դռանը։ Այդպիսի
խռովարար վարդապետներից ոմանց, որոնք ծպտվելով թաքնվել են, ինչ-
384 պես նաև նրանց թաքցնողներին || ու պահողներին ևս որոնել, իրենց գըտ-
նըված տեղերից երևան հանել, հիշյալ թաքնվողին և նրան թաքցնողնե-
րին, ուրիշներին որպես օրինակ, պատիժ սահմանել, և այս օրվանից հե-
տո, մինչև կատարածն աշխարհի, օսմանյան հավերժական պետության
հպատակ հայ ազգի միջից իսպառ վերացնել հպատակության կանոնին
ներհակ և հակազգային անպատշաճ գործունեությամբ զբաղվող չարակամ
խառնակիչների անունը։ Իսկ հպատակության կարգի մեջ անհողդողդ, կա-
տարելապես ուղղամիտ և ձեռներեց մյուս հայ հպատակները պետք է հնա-
զանդության մեջ հաստատամիտ լինեն Ստամբուլում նստող պատրիարքին,
ինչպես նաև հոգևոր առաջնորդներին այն վայրերում, ուր ապրում են հա-
յերը, և որտեղ նրանք Օսմանյան երկրում հիշյալ ազգի պատրիարքի
նման բարձրագույն հրամանով պաշտոնի են կոչված։ Որպեսզի հայ ազգի
մեջ այդպիսի հպատակության պայմաններից շեղվող և չարության հա-
կամիտելու մի կերպ հանդգնող և համարձակվող անձինք չգտնվեն և այս
պատրվակի տակ իրենց պատվով ու պարկեշտությամբ, իրենց հպատա-
կության ոգով և ազգային սովորույթի համաձայն դաստիարակված հայ
ժողովուրդը անտեղի կերպով չանիրավվի և չվնասվի, այս կետերի թվար-
կումով, որպես գործադրելի ուղեցույց, վերևում կայսերական նվիրական
և շնորհաբաշխ գրով վերնագրված մի հրովարտակ շնորհել և նրա սպա-
հանջին ու տրամադրության համապատասխան տեղեկագրեր ուղարկել
նահանգապետերին ու դատավորներին և արձանագրել այն վայրերի դի-
վանատներում, որտեղ ապրում է հայ ժողովուրդը։ Հիշյալ ժողովրդի մաք-
րագործումը կատարյալ ուշադրությամբ իրականացնելու համար տալ ձեր
բարձր հրամանը և այդ հրամանի համաձայն, եթե հարմար է ձեր բարձ-
րապատվության կամքին, հիշյալ վայրերի վսեմաշուք նահանգապետներին
ուղարկել ձեր բարձր հրամանագիրը, այդ մասին կամքն ու հրամանը նո-
րին վսեմություն հրամայող իշխանությանն է։

(Հայոց պատրիարքին ուղղված կայսերական
բարձր հրովարտակի պատճենը)

385 || Հայոց պատրիարքին. թող աստված նրան շնորհի բախտավոր վախ-
ճան, հրաման.

Իմ Օսմանյան կայսերական անսասան իշխանության հարկատու հայ հպատակներից ոմանք հանդգնում են իրենց վաղեմի սովորություններին և հպատակության կանոններին հակառակ ընթացքի մեջ գտնվել։ Թեև երբեմն ձեռնարկվել են միջոցներ այդպիսիներին զսպելու համար, բայց չափազանց շատ զբաղվածության հետևանքով հնարավոր չի եղել կատարել արժանի աշխատանք և ցուցաբերել զգուշավորություն, որով, թե՛ Ստամ-

բուլում, թե՛ Օսմանյան Երկրի տարբեր վայրերում գնալով ավելանում է
այն մարդկանց թիվը, որոնք գտնվում են այդ ընթացքի մեջ։ Եթե սրանից
հետո էլ պիտի աչքերը փակել այդ ամենի հանդեպ և անտեսել, ապա
պարզ է, որ բոլորովին պիտի խանգարվի հպատակության կարգը։ Ստուգ-
ված լինելով, որ այդպիսի անկարգությունների հանդգնություն ունեցողնե-
րը ընդհանրապես անկարգ հայ հպատակներն են, որոնք որոշ ժամա-
նակից ի վեր, որպես սեղանավորներ, արհեստավորներ և առևտրականներ,
բնակություն են հաստատել Ստամբուլում, բացառապես հպատակության
կարգը վերականգնելու համար Ստամբուլում գտնվող նման անկարգ
հայ հպատակները իրենց կանանց և զավակների հետ միասին խումբ-
խումբ արտաքսվել են Ստամբուլից, դեպի իրենց նահանգը, պայմանով որ
այսուհետև ոտք չդնեն այստեղ, իսկ ուրիշ վայրերի քաղաքացի դասից էլ
գավառների զանազան հարմար տեղեր հեռացվել են այն անձինք, որոնք
չեն հրաժարվել իրենց հին վարմունքից և որոնց այս կողմերում
մնալը համարվում է վնասակար։ Այս խնդրի բուն սկզբնապատճառը հան-
դիսացող մի շարք խառնակիչ վարդապետներից Ստամբուլում գտնվողնե-
րն էլ արտաքսվել են Միջերկրական ծովի կողմերը։ Գավառացի
կանանցից նրանք, որոնք կրում են մայրապետ անունը և աշխատում են
մոլորության մեջ գցել հայազգի կանացի սեռից մի շարք միամիտների,
արտաքսվելու են իրենց բնակավայրերը, իսկ քաղաքացի կանայք՝ Բան-
դըրմա և Միխալիչ*։ Արհեստավորների դասից նրանք, որոնք իրենց հին
մտայնությունից հրաժարվելով կընդունվեն ազգի կողմից, և որոնց բնա-
կությունը այսուհետև անթույլատրելի է Բերայում, Ղալաթայում և
Վոսփորի անհարմար վայրերում, ապա այդ կողմերում բնակություն ունե-
ցողները այնտեղից հեռացվելով վերաբնակեցվելու են Ստամբուլի հայ հը-
պատակների բնակած այնպիսի թաղերում, ինչպիսիք են Քում-քափուն,
Սամաթիան և Խասքյոյը։ Գավառների մի շարք վայրերում ապրող նման
խառնակիչ վարդապետներին ևս հարկավոր է իմ արքայական հրամանով
նշանակված առաջնորդների միջոցով հայտնաբերել և ուղարկել այդ կող-
մերի համար նավամատույցները։ Նմանապես դեպի Միջերկրական ծովի
կողմերը արտաքսելու հարցում իմ կայսերական հրամանով հանձնարար-
ված է հարկ եղածի մասին նախապես և հետագայում ձեզ հրամաններ ար-
ձակել, և գավառներում ապրող խառնակիչ վարդապետների հարցը ևս իմ
386 աղնվաբարո և խիստ ջանադիր լիազոր փոխանորդ ‖ սադրազամի կողմից
թեև գրված և ծանուցված է նահանգապետներին ու կառավարիչներին, սա-
կայն հրամանները գործադրելու և ի կատար ածելու համար անհրաժեշտ
է պահանջվածին համաձայն և հարատևորեն լինել ուշադիր և հոգատար։
Ի միջի այլոց հավանական է, որ հիշյալ վարդապետներից ոմանք ծպտ-
վելով և իրենց կերպարանքը այլափոխելու միջոցով թաքնվեն, այդպիսի-
ներին խստորեն որոնելու և արտաքսելու գործում հոգատար և ուշադիր
լինելու համար պատրիարքարանի կողմից ևս առաջնորդի ընթերականների
միջոցով, ըստ հարկի քննել և ստուգել տալով Օսմանյան երկրում գտնը-
վող բոլոր հայ եկեղեցականների վիճակն ու հանգամանքը. իրենց ձեռքում
նրա կողմից կնքված վկայագիր չունեցող խառնակիչ վարդապետների մա-
սին նույն վիճակի առաջնորդի միջոցով հաղորդել տեղի դատավո-

* Մարմարա ծովի հարավային եզերքը (ծթ.).

*րին և ոստիկանապետին, նրանց միջոցով անմիջապես ձերբակա-*
*լել և Միջերկրական ծովի կողմերը արտաքսելու համար ծով-*
*եզերքին մոտ նավամատույցներն ուղարկելու գործում խիստ ուշադիր*
*լինելու մասին իմ կայսերական հրամանի այս տրամադրության առնչու-*
*թյամբ գործիր նաև դու և մանրամասն հայտնիր և բացատրիր ազգին և*
*նրանց, ում հարկն է, որ այդպիսի խառնակիչներին թաքցնող, պահող,*
*պաշտպանող և հովանավորող անձինք պիտի պատժվեն ուրիշներին իբր*
*օրինակ։ Այս օրվանից հետո անհրաժեշտ է այդ ազգը ինչպես հարկն է*
*զտել ու մաքրել նման խառնակիչներից, որպեսզի այդ ազգի մեջ այլևս*
*հպատակության կանոնին հակառակ նվազագույն չափով անգամ անհարմար*
*գործեր և հպատակության կարգին անհարիր և ազգի սովորությանը խորթ*
*վիճակներ չստեղծվեն։ Այս առիթով իմ կայսերական հրամանն է՝ ան-*
*հրաժեշտ ուժն ու կարողությունը գործադրել, որպեսզի պատվով և*
*պարկեշտությամբ աշխատող օսմանյան իմ հպատակների նկատմամբ որևէ*
*ոտնձգություն և թշնամանք տեղի չունենա, իսկ հակառակ ընթացքի արտա-*
*նություն ցույց տվողները խստորեն զգուշանան և հեռու մնան պատասխա-*
*նատվությունից և կշտամբանքի ենթարկվելուց, որի համար իր արքայական*
*վեհափառության սքանչելի հրովարտակի համաձայն հատուկ պատվիրու-*
*մով և հոգատարությամբ արձակվել է սույն բարձրարժեք հրամանը և վե-*
*րևում իմ արքայական մեծազոր ինքնագրությամբ զարդարելով, տրվել է*
*ձեր ձեռքը։ Արդ, իմ այս նվիրական հրամանը թող պահվի պատրիարքա-*
*րանում, իսկ նրա առանձին պատճենները ուղարկվեն Օսմանյան երկրի այն*
*վայրերը, որտեղ կան հայ հպատակներ ու առաջնորդներ, որպեսզի այս*
*հրամանի վեհիմաստ բովանդակությունը այսուհետև, Աստծու կամեցածին*
*չափ, նրանց համար ծառայի որպես ուղեցույց կանոն. քո կողմից էլ խըն-*
*դիրը ամենայն մանրամասնությամբ գրվի ու ծանուցվի և այն տառացիո-*
*րեն ամեն տեղ կիրառվի և գործադրվի։ Այդ ազգի միջից վերոհիշյալ խառ-*
*նակիչ վարդապետներին ամբողջովին վտարելով ու հեռացնելով, հարկա-*
*վոր է այսուհետև հպատակության կանոնից դուրս որևէ անհարմար վի-*
387 *ճակի տեղի չտալու համար || անհրաժեշտ միջոցներ ստեղծելու և լրացնելու*
*գործում լինել չափազանց հոգատար և ուշադիր։ Այսօրվանից հետո այդ-*
*պիսի խառնակիչներին պաշտպանելու հանդգնություն ունեցող անձանց,*
*ովքեր էլ որ լինեն, բոլոր պարագաներում անհրաժեշտ խստագույն պա-*
*տիժը անհապաղ ի կատար ածելու համար աշխատեցեք տեղեկացնել։*
*Դու ես այդ հարցում լինես ուշադիր և խիստ ջանադիր, հեռու մնաս այն*
*գործերից, որոնք կարող են թյուրիմացաբար վնաս և զրկանք պատճառել*
*խառնակչություններին մասնակցություն չունեցած անձանց. ստույգ իմա-*
*ցիր, որ իմ այս արքայական պատվերները կատարելու գործում որևէ նե-*
*րողամիտ թուլլատվությունը կարող է քո մասին դառնալ վտանգի պատ-*
*ճառ, պատժի ու զղջման արժանի, ուստի ըստ այդմ վարվեցեք ու գոր-*
*ծեցեք, իսկ հակառակը գործելուց խիստ զգուշացեք և հեռու մնացեք։*

***1243/1828 թվականի շաբան ամսի սկզբներին***

( نمرو ٢٤ ) ( صحیفه ١٩٠ )

( ارمنی بطریقنك باب عالی‌یه تقدیم ایتدیکی ورقه صورتیدر )

اق دکزه نفی اولنان مفسد باباسغورته‌دن بعد کلسامری و ر طاقیدخی باخط همایون منفالرینه کیده‌جك ایکن شمدی یه قدر عدالیه‌ده ( * ) نام محلده اقامت اوزره اولنلرك تقریرینه تأکید اولنمسی ممکن اولدیغی حالده بونلرا کثری انقره‌لی اولوب حیله وطن اصلیه‌لرندن ایدی دیار آخره چیقمالری

کافهٔ انقره‌لی مفسدلر وطن اصلیه‌لرندن طاغیلوب محل آخرلرده کندو ذاتلرنده حس کوز اولان فسادلرینی اجرا ایلدکلرندن بوندن اقدم بعض اوزرینه یوریلدی ایله عیال و اولادلریله بردخی چیقمامق اوزره وطن اصلیه‌لرینه کوندرلمش اولمغله مرسوملرمرقی صورتنده اولوب ایجق کندو ولایتلرنده اسکان ایتمش اولدقلرندن اکر چیقمامق لازم کلور ایسه ینه فسادلردن خالی اولمیه‌جقلری و بالایجاب بعضیلرینك عفو واطلاقلری لازم کلور ایسه ایتلرندن فساد ایله ملعم اولنمش کسنه‌لرك دیکر دفعه چاکر بدنیان یوریله‌جغی بونلردن بشقه بافرمان عالی محل آخرده منفیلرك بعضیلری عفو واطلاق یوریلدیغی حالده درعلیه‌یه کلدکلرنده بالاراده همایون غلطه و بك اوغلی وسایر شیوع اولان محلارده اسکان ایتدیرلك سایر بافرمان عالی رخصت و یریلان ارمنی رعایاسی بو انسان محله دروللرنده اسکان ایدرك قدیمدن اوله کلدیکی اوزره بطریقلرینه اطاعتدن برکونه قصور ایتمامالری

شفقتا امر و اراده بیورلدیغنده منی من غیر حد خاطر کترلمه‌مه خطور ایدن بونلرك خیانت وخبثی آشکار ایکن بالایجاب بعضیلرینك کامسی امر و اطلاق بیوریلور ایسه ده خیانت وافسادلرینی وعدم رعایترینی اجرا ایتمالری ایجق اندرون همایون واولیای امور افندیلرمزك داژه‌لرینه کیروب چیقمه‌دیغی مری اخذ اعطاسنه دخی قارشدرمامق وطشره‌لرده وزرای عظام ومیرمیران کرام ومتسلم واعیان وویوده وموالی وقضات خدمتلرنده و یانلرنده بولنمامق صورتنی رأی عالیلرینه موافق کلور ایسه باراده همایون شروطه ربط اولندقده بونلر امثالی کبی قضیاب اولیه‌جغی

وخیانتلرینی دخی اجرا ایدمیه‌جکلری و آزون بکون انقراض بوله‌جقلری دخی مأمول اولمغله خصوص مذکوربوندن بویله دستور العمل طوتلق اوزره اقتضا ایدن محلاره علم وخبر و یرلمسی اراده علیه‌لرینه منوط ایدوکی

---

( * ) انطالیه

## ( نمرو ١٦ )

## ( ارمنی بطریقنک تقریری )

تقریر قوللری بودرکه

طرف چاکری‌یه ورود ایدن فرمان عالیشانک مفاهم امر مزایاسنده برمدتدنبرو
انقره وممالک سائره‌دن ورود ایله درسعادتده تمکن وخلاف شروط رعیت
اویغونسز حرکتلره جرأت وارمنی ملتنک افرادینی مستلزم اوضاع ردیه‌یه
جسارت ایتمکده اولدقلری تحقیق اولنه‌رق نظام ملک وملتی خللدن وقایت
وفیمابعد درسعادته ایاق بصمامق ومملکتلرنده کار وکسب وحراثت وزراعتلریله
مشغول اولمق اوزره متعلق بیوریلان امر واراده سنیهٔ ملوکانه موجبجه
درسعادتدن طرد ودفع اولنمش اولان مفسدانک کندولرینه مخصوص پاپاس
اتخاذ ایتدکلری مفسدت پیشه‌لر دخی کروهمز ورابطه ایله دفع اولنمشلر ایسه‌ده
مسفور پاپاسلر عادت مستمره وعناصر بدخواهلرنده مرکوز خباثتلری اوزره
کتدکلری محللرده دخی تلک طورمیوب برطاقم کندو بیلمز ونیک وبده
عقلی ایرمز ارمنی طائفه‌سنی اسلافی اضلال وطور رعیتدن خارج اوضاع ردیه‌یه
اجتسار سوق وترغیب ایده‌جکلری درکار وبو وجهله ملک وملتی بینه اخلاله سبب
ومستقل اوله‌جقلری پدیدار وازغیر درسعادتده بولنان اومقوله حرکت ناهمواره‌یه
مداوت ایدن شهری مفسدلری وکرک مخصوص پاپاسلرینک دخی شمدی‌یه قدر
معلوم ومجزوم اولان ملعنت وخباثتلری اقتضاسندن محقق وبو عرضهٔ
نامرضیه‌نک اوکی کسدرلمسی مستلزم فوائد مطلق اولمغله نظام ملک وملتی
اخلال وخللدن وقایت درسعادتده کرک طرد ودفع اولنمش اولان اومقوله
پاپاسلرک بوندنبویله ممالک محروسه‌نک نه محلنده اولور ایسه اولسون بولندیغی
محلک ضابطانی وکرک بطریق طرفندن تعیین وبامر عالی مأمور قلنان قره‌باش نام
راهب معرفتی مفسدان مرسومانک پاپاسلرینی تحری وحال وکیفیتلرینی
تجسس ایدرلرده بطریق طرفندن ممهور سند اولمدقلری لدی المعاینه واولمیانلری
محل مرقومک ضابطی وقره‌باش معرفتی ایله بالمؤاخذه سمت وجوار اولان سواحل
والیسی حضرتلرینه ارسال وتسلیم ووالی مشار الیه دخی درعقب مرسوملری
ممالک محروسه اسکله‌لرینه چیقارلمیه‌جق صورتلر ایله مجرد ممالک محروسه‌دن طرد
ودفع ایله طرد ودفعنی مبین اعلام شرعیسی باب عالی‌یه عرض وتقدیم اولنمق
واومقوله مفسدت پیشه پاپاسلردن بعضی تبدیل جامه ایله کندوسنی کتم

واخفا ایدنلری دخی تحری و بولندیغی محللردن اخراج واخفاسنه مسفور ایله
کندوسنی کتم ایدنلری دخی عبرةً للسائرین جزالری ترتیب اولنه‌رق بعدالیوم
دولت علیهٔ ابدی القرارک ملت ارمنیان رعایالری درونده الی یوم القیامه اومقوله
مغایر شروط رعیت وخلاف مسلک ملت او بیهوده حرکت ایدن مفسدانک
نام بدخواهلری رفع ایله سائر شروط رعیتده ثابت صدق تام ایله متشبث رعایای
ارمنیان قوللرینک دخی درسعادتده موجودی بطریقنه و کرک ملت مزبورک
ممالک محروسه‌ده بطریق مثللو بافرمان عالی مأمور قاره‌باش راهبلرینه محلنده
موجود رعایالرین دخی تحت اطاعتده بولنمغون ایله ملت ارمنیانده اومقوله شروط
رعیتدن انحراف و تبدیل خیانته برکونا جرأت وجسارت ایدنلری بولنمامق اوزره
و بو بهانه ایله سکنه وعرض وادب ومصالح رعیت واصول ملت اوزره
مؤدب اولان ارمنی طائفه‌سی فضولی تعدی وتجدیده اولنمامق خصوصلری
درجیله دستور العمل طوتلمق اوزره بالاسی مبارک خط همایون عنایتمقرون ایله
مصنون برقطعه فرمان عالیشان اصدار وتسیاری موجب ومقتضاسی اوزره
ملت ارمنیانک بولندیغی محللرک ولات وحکامنه علم وخبر تسیار وسجلاته
قید ایله ملت مزبور تطهیرینه دقت نامه ابتدار اولنمق امرنده اراده علیه‌لری
تعلق بیوریله‌رق امر جلیل الشان مزبورک موجبجه مذکور قومان والیلری
حضراتلرینه فرماننامه سامیلری اصدار وارسالی اراده علیه‌لرینه اکرچه
موافق ایسه اولبابده امر وفرمان حضرت من له الامر کدر

( ارمنی پطریقنه خطاباً اصدار اولنان فرمان عالی صورتیدر )

ارمنی پطریقی ختمت عواقبه بالخیر حکم

سلطنت سنیهٔ دائمی القرارمك جزیه گذار ارمنی رعایاسندن بعضیلری قدیم ابتداریله
واصول رعیتك خلافی اوضاعه اجتسار ایتمکده و بو مقوله‌لرك اراذل اراتق
منعلری اسبابنه تشبث اولنمش ایسه‌ده نفس مشاعلدن ناشی لایقیله اقدام
وتقید اولنه‌مدیغنه مبنی کرك آستانهٔ علیه‌مده و کرك ممالك محروسه‌مك
سائر محللرنده بو طورده اولنلر تکثر ایلمکده اولدقلرندن بوندن بویله دخی بو بابده
اغماض اولنمق لازم کلسه شیرازهٔ نظام رعیت کلیاً خللپذیر اوله‌جغی ظاهر
وتحقیق اولندیغنه کوره بو مقوله اویغونسزلقه جسارت ایدنلرك اکثری
بو مدتدنبرو درسعادتمده صرافلق واسنافلق وتجارت صورتیله تمکن ایتمش اولان
انقره‌لی ارمنی رعایاسی اولدیغی بدیهی و باهر اولدیغنه بناء مجرد نظام حال رعیتی
استحصال ضمننده درسعادتمده بولنان اومثللو انقره‌لی ارمنی رعایاسی فیمابعد
درسعادتمده ایاق باصمامق اوزره عیال و اولادلریله طاقم طاقم ولایتلرینه
طرد ودفع قلنمش و سائر ممالکتلی مشهوری طائفه‌نك دخی ایچلرنده اسکی
حاللرندن رجوع ایتمیان و بو صورتده قالمسی مصر اولنلر طشره‌لرده برمناسب
محللره و بو ماده‌نك اصل منشأ و بادیسی اولان برطاقم مفسد پاپاس طائفه‌سندن
درسعادتمده بولنانلر دخی آق دکز طرفنه و ارمنی ملتی اسناف طائفه‌سندن
برطاقم ساده دل اولنلرینی دخی اضلاله چالشمقده اولان ماره بت تعبیر اولنور
عورتلرن دخی طشره‌لی اولنلر ایلکلرینه و شهرلیلر بدخی یانلرده وجه‌ایلجه
دفع اولنلری و سائر اصناف طائفه‌سندن اسکی حاللرندن رجوع ایله علیحده
قبول اولنه‌جقلر اکدخی فیمابعد بك اوغلی وغلطه و بوغاز ایچنك مناسبتسز
محللرنده اقامت ایلملری جائز اولمدیغندن اول مقاولرده خانه‌سی اولنلر قالدیریلوب
آستانهٔ سعادتمده قوم قپو و صماتیه و خاصکوی دقیقو ارمنی رعایاسی محلاتنه نقل
واسکان ایتدرلمسی و طشره‌لرده بعض محللرده اولان ارمنلو مفسد
پاپاسلر دخی محللرنده اوامر شریفه‌مله نصب اولنمش بولنان ارمنی مرخصه‌لری
معرفتلریله یاتخری بولندیریلوب سمت ومناسب اولان اسکله‌لره کوندریلمه‌رك
کذلك آق دکز طرفنه دفع اولنمسی خصوصلرینه ارادهٔ سنیه‌م تعلق
ایدرك اقتضالری دفعهم و طشره‌لرده بیورلدیلر اصدار ایله تنبیه اولنمش
وطشره‌لرده‌کی مفسد پاپاسلر خصوصی باالفعل صدر اعظم مشروشیم و وکیل

مطلق قوی الهم جانبندن ولاة ومتصرفينه تحرير واشعار قلنمش ايسه ده
بروفق مطلوب وعلى الدوام تنفيذ واجرالرینه کرکی کبی دقت واهتمام اولنمسی
لازمه‌دن وازجمله ذکر اولنان مفسد باپاس طقمندن بعضیلری تبدیل هيئت
وتغییر قیافت ایله اختفا ایلدکلری احتماله مبنی اوره‌جقلر کرکی کبی تعرف اولنه‌رق
ظاهره اخراج وطرد ودفعلری شدتله اعتنا ودقت اولنمق اوزره اطراف بغفسانه
طرفندن دخی قرباش معیتیله ممالک محروسه‌ده بولنان بالجمله ارمنی باپاسلرینک
حال وکیفیتلرینی کرکی کبی تحری وتجسس ایتدیره‌رك بونلرده طرفکدن
مهور سند بولنمیان مفسد باپاسلر محللرنده بولنان مرخصه‌لر معرفتیله اولدقلری
محلك حاکم وضابطی طرفنه خبر ویریله‌رك درحال انلرك معرفتلریله اخذ وبحر
سفید طرفنه طرد ودفع اولنمق اوزره سواحله قریب اولان اسکله‌لره
کوندرلمسی خصوصنه کرکی کبی دقت اولنمسی اراده سنیه ملوکانهم
مقتضاسندن اولمق ملابسه‌سیله سندخی اکا کوره حرکت و بومقوله مفسدلری
کتم واخفا وتعصب وحمایه‌یه متجاسر اولنلر عبرة للسائرین ترتیب جزا
قلنه‌جقلرینی ملتکدن ولازم کلنلره اطرافیله افاده وتفهیم ایله بعد الیوم ملت
مرسومه‌نك بومقوله مفسدلردن کرکی کبی تصفیه وتطهیریله بردخی مغایر
شروط رعیت ملت مرسومه درونده ادنی درجه اویقونسز حرکت
ومغایر اصول رعیت ومنافی آیین ملت حالات وقوعه کلمامسی و بو وسیله
ایله عرض وادبیله مشغول اولان رعایای سلطنت سنیه‌مه دخی بر کونه ادی
ورنجیده اولنمامسی خصوصنه صرف وسع وقدرت وخلافی وضعه ارائت
رخصتله مسؤل ومعاتب اولمقدن بغایت تحاشی ومجانبت ایلیك فرمانم
اولمغین صحیفه پیرای صدور اولان خط همایون شوکت مقرون پادشاهانهم
موجبنجه تنبیها واهتماما مخصوصا اشبو امر جلیل القدرم اصدار وبالاسی
خطشریف شوکتردیف شاهانه‌مله توشیح ایدیله‌رك اعطا اولنمشدر اعدی
اشبو امر شریفمی بطریقعانه‌ده حفظ ومضمون منیفی بوندن بویله الی ماشاء
الرحمن دستور العمل طوتمق اوزره بر قطعه صورتیسنی ممالک محروسه‌مده
ارمنی رعایاسی ومرخصه‌لری بولنان محلاره ارسال وتسیار وکیفیت اطرافیله
طرفکدن تحریر واشعار اولنه‌رق شو رشته حرف بحرف تنفیذ واجراسی
وبالاده بیان اولنان مفسد باپاس مقوله‌لرینك کلیا ملت مرسومه درونندن
طرد ودفعلریله فیمابعد طور رعیتدن خارج برکونه اویغونسزلق وقوعه

كلّيسي اسبابنك استحصال واستكماله وفور اعتنا ودقت و بعدالیوم اومقوله
مفسدلری رعیده استصحاب مسارعت ایدن هر کیم اولور ایسه لهرحال حقنده لازم
کلان تأدیبات شدیده بلا امهال اجرا قلنمق ایچون کیفیتی افاده واشعاره
مبادرت وسندخی شو خصوصده کمالیله اقدام ودقت وفسادده مدخلی
اولمیانلره سوء ظن ایله غدری موجب حرکتدن مجانبت واشبو تنبیهات
پادشاهانه‌مك اجراسی خصوصنده برکونا مسامحه صورتی حقکده موجب
وخامت ومستوجب تأدیب وندامت اوله جغنی محقق بیلوب اکا کوره عمل
وحرکت وخلافندن غایة الغایه تحاشی ومباعدت ایلمك بابنده

فی اواخر ش سنه ١٢٤٣